

«Ճամլեան»ի Աշակերտներուն Տպաւորիչ Հանդիպումը Մարդկային Իրաւանց Գործիչ Պեթել Չարխունտեանի Հետ

Գաղութի Կեանքէն 14 hours ago



ԿԼԵՆՏԵՅԼ.- Ճամլեան Ազգ. վարժարանի 8րդ դասարանի աշակերտները Ուրբաթ, Յունուար 12ին, «Սքայփ»ի միջոցաւ տպաւորիչ հանդիպում մը ունեցան Միացեալ Նահանգներու քաղաքացիական իրաւանց պայքարին մասնակցած մարդկային իրաւանց գործիչ Պեթել Չարխունտեանի հետ:

Մարթին Լութըրը Քինկի տարեդարձի սեմին կայացած սոյն հանդիպման ընթացքին, Չարխունտեան մանրամասնութիւններ փոխանցեց 1960ականներու քաղաքացիական իրաւանց պայքարին մասին՝ մատնանշելով, որ Հայոց Ցեղասպանութեան իբրեւ հետեւանք հայութեան իրաւազրկումները կարելոր ազդեցութիւն ունեցած են այդ պայքարին գործնականապէս մասնակցելու իր որոշումին գծով:

Աշակերտները առիթը ունեցան շարք մը հարցումներ ուղղելու՝ ստանալով բաւարարող եւ քաջալերող պատասխաններ, որոնց հիմնական պատգամը այն էր, թէ իւրաքանչիւրս պարտականութիւն ունի դէմ դնելու անարդարութեանց: Ան քանի մը անգամ հայերէնով կրկնեց «Մի՛ վախճա՛ք» խօսքը՝ շեշտելով, որ անարդարութեան դէմ պայքարիլը միշտ դիւրին չէ, սակայն բոլորին համար իբրեւ բարոյական պարտականութիւն պէտք է նկատուի:

Յիշենք, որ ՅՕՄԻ վարիչ տնօրէն Վերժինի Թուլումեան կենսական դերակատարութիւն ունեցած է դաստիարակչական այս իւրայատուկ հանդիպումը կազմակերպելու աշխատանքին մէջ:

